

ԲՈՒԿՆԵՐԻ ՓՈՒՅՄՈՒԹՅՈՒՆ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ  
КОНТРОЛЬНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

ՆԱԽԱՊԱՀՊԱՆԵՑԵՔ  
ԼՈՒԾԵՐԻՑ ՓՈՔՐԱՋԱՍԱԿ  
ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ

616-053.2

Գ-84

Հայկական ԽՍՀ Առօրյա գրականության Սան Լուս Բաժին

ՅԵՐԵՎԱՆ

1939

616-053,2

ԲԵ. Ա. Բ. ԳՈՅՄԵԿԵՐ

30 JUL 2010

7-84

պր.

ՆԱԽԱՊԱՀՊԱՆԵՑԵՔ  
ԼՈՒԾԵՐԻՑ ՓՈՔՐԱՅԱՍԱԿ  
ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ

Հայկական ԽՍՀ Առժողովոմատի Սան Լուս Բաժին  
ՅԵՐԵՎԱՆ 1939

21 MAR 2013

### Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԼՈՒԾԵՐՆ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ՅԵՐԵՆԱՆԵՐԻՆ

Սոցիալիստական շինարարութեան վիթխարի հաջողութիւնները, աշխատավորները կյանքի նյութական և կուլտուրական պայմանների բարելավումը զգալիորեն իջեցրին մահացութիւնը մեր յերկրում: Մասնավորապէս, ծծկեր յերեխաների մահացութիւնը մեզ մոտ, ցարական Ռուսաստանի համեմատութեամբ, իջել է ավելի քան յերկու անգամ:

Բայց մեր յերկրում, մեր այս բերկրալի ու յերջանիկ կյանքի պայմաններում անհրաժեշտ է ել ավելի նվազեցնել մանկական մահացութիւնը:

Իսկ ինչու, ի՞նչպիսի հիվանդութիւնները ևն ամենից շատ մեռնում փոքրահասակ յերեխաները:

Այն պատճառները, վորոնք կարող են փոքրահասակ յերեխաներին կործանման հասցնել, շատ են՝ ծանր գրիպը, վորն ուղեկցվում է թոքերի, ականջների և յերիկամների հիվանդութիւններով, տուբերկուլյոզը և ուրիշ վարակիչ հիվանդութիւններ, որապակասութիւնը և այլն: Մտկայն փոքրահասակ յերեխաների մահացութեան գլխավոր պատճառներից մեկը — այդ ամառային լուծերն են:

Ամառային լուծերը — փոքրահասակ յերեխաների



257  
40

զիտալոր թշնամիներն են: Պայքարը նրանց դեմ—  
վստահելի միջոց և մանկական հիվանդացումներն ու  
մահացումներն իջեցնելու համար:

Այդ պատճառով յուրաքանչյուր մայր պետք է  
զիտենա այն պատճառները, վորոնք վտարահասակ  
յերեխաների մոտ լուծեր են առաջացնում, զիտենա,  
թե ինչպես են ընթանում այդ լուծերը, ինչպես պայ-  
քարել նրանց դեմ և ինչպես նախապահպանել յերե-  
խային հիվանդանալուց:

## ՅԵՐԵԽԱՆԵՐՆ ԻՆՉՈՒ ՅԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՍ ԼՈՒԾԵՐՈՎ

Իսկ վտարահասակ յերեխաներն ինչո՞ւ յեն հի-  
վանդանում լուծով: Բերանում, ստամոքսում և ա-  
զիքներում արտադրվում են զանազան տեսակի հյու-  
թեք, վորոնք ոգնում են կերածը մարսելուն: Յերե-  
խան իր կյանքի առաջին ամիսներին ամենից հեշտ  
մարտում է կնոջ կրծքի կաթը, վորը նրա նորմալ  
սնունդն է հանդիսանում:

Կովի կաթի մարտումը պահանջում է մեծ լարում,  
այսինքն հյութերի ուժեղացրած արտադրություն:  
Վոչ բոլոր յերեխաներն են կարողանում մարսել այդ-  
պիսի բեռնվածությունն իրենց կյանքի առաջին ամիս-  
ներին:

Ճ—Յ ամսական յերեխաներն արդեն կարողանում  
են լավ մարսել ուրիշ ուտելիքներ՝ շիլա, կիսել: Ա-  
վելի մեծահասակ յերեխայի սրգանիքը կարողանում  
է մարսել ավելի բազմազան ուտելիքներ:

Իսկ ի՞նչ է կատարվում, յերբ յերեխան կերակր-  
վում է իր հասակին անհամապատասխան ուտելիքով:

Այդ ուտելիքը վատ է մարսվում: Մարսողությու-  
նը խանդարվում է, յերեխան ավելի վատ է ավելաց-  
նում իր քաշը, հյուծվում է: Այդպիսի յերեխան  
հեշտությամբ է հիվանդանում լուծով:

Ահա թե ինչու կյանքի առաջին ամիսներից ար-

հետապահան կերպով կերակրվող յերեխաներն ամենից ավելի յեն նախատրամադրված լուծերի, յեթե նույնիսկ նրանք տեսքով գեր են յերեվում:

Անհամապատասխան սննդով, մանավանդ կովի կաթով անկանոն կերակրելը նույնպես հեշտությամբ կարող է լուծ առաջացնել:

Յեթե մայրը կարգը չպահպանելով շատ հաճախ է կերակրում ծծկեր յերեխային, նրա բերանն է կոխում կուրծքը կամ կաթով շիշը հենց վոր նա լաց է լինում, յերեխան գերկերակրվում է: Այդպիսի յերեխայի ստամոքսը ծանրաբեռնվում է, չի կարողանում մարսել ուտելիքի ավելցուկը և յերեխայի մոտ կարող է սկսվել փսխում ու լուծ:

5—6 ամսականից շուտ յերեխային հավելյալ սնունդ տալն աննպատակահարմար է:

Այնուամենայնիվ շատ մայրեր չխորհրդակցելով բժշկի հետ, սկսում են շատ շուտ կերակրել յերեխային կովի կաթով, շիշայով կամ վորեն ալյուրով:

Յերեխային հավելյալ սննդով շուտ կերակրել սկսող մայրերի կրծքի կաթը քանի գնում պակասում է և յերեխան ժամկետից առաջ գրկվում է մայրական կրծքից:

Առանց կարիքի վաղ հավելյալ սնունդը, այն էլ հաճախ անհամապատասխան ուտելիքով, վնասակար է յերեխային:

Մեկ տարեկանից բարձր յերեխաները, վորոնք արդեն բազմապան սնունդ են ստանում, նույնպես հեշտությամբ հիվանդանում են, յեթե նրանց տալիս են անհամապատասխան կամ վոչ թարմ ուտելիքեն՝ յերշիկ, կոնսերվներ, վոչ թարմ միս, վոչ թարմ կաթ և այլն:

Լուծերի յերեվան դալու մեջ մեծ դեր են խաղում միկրոբները:

Միկրոբները— այդ մանրագույն, հասարակ աչքով անտեսանելի կենդանի էյակիներ են: Միկրոբներին կարելի չէ տեսնել միայն հատուկ մեծացնող ապակիների միջոցով, վորը մանրադիտակ է կոչվում:

Միկրոբների քանակության մասին դադարաբեր կազմելու համար բավական է ասել, վոր մի կաթիլ հեղուկի մեջ կարող են նրանք միլիոններով դասվել:

Միկրոբները տարբեր են լինում: Յուրաքանչյուր վարակիչ հիվանդությունն առաջանում է հատուկ միկրոբից:

Որինակ, կան միկրոբներ, վորոնցից հիվանդանում են սուբերկուլյոզով (թոքախտով), միկրոբներ, վորոնցից հիվանդանում են դիֆտերիայով, խոլերայով, վորովայնատիֆով, արյունալուծով և ուրիշ վարակիչ հիվանդություններով:

Լուծեր առաջացնող միկրոբները կարող են յերեխայի որդանիղմի մեջ ընկնել դանադան ճանապարհներով:

Հաճախ յերեխան հիվանդանում է կեղտոտված կաթից:

Կաթը մեծ մասամբ միկրոբներով կեղտոտվում է կթելու ժամանակ: Կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և կաթնատնտեսական Փերմաներում հետևում են մաքրությանը և այնտեղ կաթը հազվադեպ է կեղտոտվում:

Սակայն վաճառքի համար մասնավոր մարդկանց կողմից շուկա յե հանվում զգալի քանակությամբ կաթ, վորը ապահովված չէ կթելու ժամանակ մաք-

բուժյունն սլահպանելու տեսակետից: Այդպիսի կաթը կարող է կեղտոտված ու վարակված լինել:

Բայց մաքուր, նույնիսկ յեռացրած կաթի մեջ ևս, յեթև նրան պահում են վատ լվացած աժաճի մեջ, չծածկված, կարող են միկրոբների ընկնել:

Միկրոբները կարող են ընկնել նաև ջրի մեջ: Ջուրը հաճախ պահվում է չծածկված դուլերի կամ կիսատաղանթների մեջ: Այստեղ կարող են ընկնել ճանճեր, փոշու և կեղտի մասնիկներ: Ջուրը կեղտոտացնում են նաև կենդանիները:

Յերեխայի վատ խնամքը, յերեխայի սողալը կեղտոտ հատակին, նրա թաթիկների, խաղալիքների կեղտոտվելը, վորպիսիք նա հաճախ բերանն է տանում, նույնպես կարող է հասցնել միկրոբներով վարակելուն:

Յեթե միկրոբներն ընկնեն ուտելիքի մեջ, իսկ ուտելիքի հետ յերեխայի օրգանիզմը, ապա յերեխան ևս կարող է լուծով հիվանդանալ հաճախ շատ ծանր ձևի:

Միկրոբներն ուտելիքի մեջ են ընկնում գլխավորապես մաքրություն չպահպանելու հետեվանքով: Կաթի մեջ, որինակ, միկրոբները հեշտությամբ են ընկնում կթելու ժամանակ, ուշադիր մաքրությունն չպահպանելու դեպքում: Հացի, բանջարեղենի, մրգերի և ուրիշ սննդամթերքների վրա միկրոբներ կարող են փոխանցվել կեղտոտված ձեռներով և այլն:

Շատ մեծ վնաս են հասցնում ճանճերը: Տեղից տեղ թոչեղով ճանճերը միկրոբներ են փոխանցում և վարակում ուտելիքը, ջուրը:

Յերեխան կարող է լուծով հեշտությամբ վարակ-

վել նաև այն դեպքում, յերբ վորևե մեկը ընտանիքում կամ բնակարանում ապրողներից՝ հիվանդ է լուծով:

Յերեխայի վարակումը հիվանդ մարդուց շատ հեշտությամբ է վատարվում: Հիվանդները դիպչում են իրենց սպիտակեղենին, մարմնին, կեղտոտում են իրենց ձեռները: Այդ ձեռներով ել նրանք վերցնում են յերեխաներին: Հաճախ յերեխան պառկում է միևնույն մահճակալին հիվանդի հետ, քնում նրա հետ և այդպիսով վարակը հեշտությամբ յերեխային է փոխանցվում հիվանդից:

Յերեխայի լուծով հիվանդանալու գործում հսկայական նշանակություն ունի ամառային շոգը: Վորքան ավելի շոգ է ամառը, այնքան ավելի շատ յերեխաներ են հիվանդանում լուծով:

Ինչո՞ւն յե այդպես լինում:

Ամառվա շոգ յեղանակին միկրոբներն ավելի շուտ են բազմանում և փչացնում ուտելիքը, յեթև նրան սառը տեղ չեն պահում: Փոշու և ճանճերի շնորհիվ միկրոբներն արագորեն տարածվում են և կեղտոտացնում չծածկված ուտելիքը:

Բացի դրանից, ամառվա շոգի ազդեցության տակ մարսողությունը կարող է հեշտությամբ խանգարվել՝ շոգ ժամանակ ախորժակն ավելի վատ է լինում:

Ամռանը յերեխային հյուծում են նաև ճանճերը, վորոնք չըջապատում են նրան և անհանդատացնում:

Անհրաժեշտ է նշել լուծով հիվանդանալու մի պատճառ ևս: Կանոնավոր կերակրվող, մաքրության մեջ պահվող յերեխան լավ խնամքի դեպքում առողջ է, դեր, ամբակաղմ: Այդպիսի յերեխան ավելի հաղվաղեկ է հիվանդանում լուծով, իսկ յեթև հիվանդա-

նում ել ե, ապա հեշտութեամբ ե տանում հիվանդութիւնը:

Բայց յեթե յերեխան անկանոն ե կերակրւում, նիհար, թույլ ե աճում, հաճախ հիվանդանում ե, յեթե նրան վատ են խնամում, ապա այդպիսի յերեխան ավելի դժվար, ավելի ծանր ե տանում լուծը:

Հատկապես այդպիսի թուլացած յերեխաններն են լուծով հիվանդանում: Յեւ այդպիսի յերեխաններին պետք ե առանձնապէս պաշտպանել անկանոն կերակրելուց, վատորակ սննդից, գերտաքացումից:

Մենք տեսնում ենք, վոր լուծերի պատճառները տարբեր են լինում: Տարբեր ել ընթանում ե յերեխայի հիվանդութիւնը: Այդ կախված ե մի շարք պատճառներից:

Այդ կախված ե յերեխայի հասակից. վորքան ավելի փոքր ե յերեխան, այնքան ավելի ծանր ե ընթանում հիվանդութիւնը ե այնքան ավելի վտանգավոր ե նա:

Այդ կախված ե նրանից, թե ինչպէս են կերակրում յերեխաններին: Յեթե յերեխան կանոնավոր ե կերակրւում ե մայրական կաթ ստանում, ապա նրա հիվանդութիւնը ես ավելի թեթեւ ե ընթանում: Ընդհակառակը, կրծքից շուտ կտրած ու արհեստական կերպով, ե այն ել անկանոն ու անկարգ կերակրւող յերեխան ավելի ծանր ե տանում հիվանդութիւնը:

Շատ բան ե կախված նաև յերեխայի ընդհանուր վիճակից: Յերեխան, մինչև լուծը, վորքան ավելի քիչ ե հիվանդացել ուրիշ հիվանդութիւններով ե վորքան ամրակազմ ե նա, այնքան ավելի թեթեւ ե ընթանում նրա լուծը:

Առանձնապէս ծանր ե ընթանում անուշադրութեան մատուցած, նիհար յերեխաների լուծը ե նրանց, վորոնց վատ են խնամում:

## ԻՆՉՊԵՍԻ ԼՈՒԾԵՐՈՎ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՅԵՐԵՒԱՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՆՐԱՆԲ ԸՆԹԱՆՈՒՄ

Յերեխաները հաճախ հիվանդանում են, այսպէս կոչված, հաւարակ լուծով:

Այդ հիվանդութիւնը կայանում ե նրանում, վոր յերեխան համեմատաբար վոչ վատ վիճակի մեջ գտնվելով, կեղտոտում ե որական 8—10 անգամ, ամենից հաճախ կանաչ դույնի:

Յերեխայի ախորժակը մի քիչ խանդարւում ե, յերեխան անհանգստանում ե, շատ ճշում, շուտ նիհարում ե, թուլանում: Յերբեմն բարձրանում ե ջերմաստիճանը, փսխում ե, բայց ավելի հաճախ այդ լուծն ընթանում ե առանց բարձր ջերմաստիճանի:

Այդպիսի լուծը մեծ մասամբ ամուսն ե լինում, բայց յերբեմն յերեխաները նրանով հիվանդանում են նաև ձմուռը ե տարվա մյուս յեղանակներին:

Հասարակ լուծը կարող ե մի քանի օրվա ընթացքում անցնել, բայց կարող ե ե յերկար ժամանակ, չաբաթներ տեւել:

Յեթե ժամանակին միջոցներ ձեռք առնեն, յեթե յերեխային իսկույն բժշկի ցույց տան ե սկսեն կանոնավոր բուժել, վերջ ե վերջո ամեն ինչ բարեհաջող կանցնի, յերեխան շատ շուտ կվերականգնի իր ուժերն ու առողջութիւնը:

Իսկ յեթե ժամանակին միջոցներ ձեռք չառնեն,

ապա հասարակ լուծը կարող է ավելի ծանր ձեռնացնել:

Ծանր լուծը կարող է սկսվել թեթև հասարակ լուծից, վորն աստիճանաբար ավելի ծանրանում է: Յերբեմն հիվանդութունը միանգամից բուռն ու ծանր է սկսվում:

Այդպիսի լուծի դեպքում յերեխայի մոտ ամենից առաջ փսխոց է սկսվում: Այդ փսխոցը շատ հաճախակի յե լինում, տանջալից, առաջանում է կաթի կամ նույնիսկ ջրի ամենափոքր կուտից: Փսխելու պատճառով յերեխան համարյա թե բոլորովին չի կարողանում սնունդ ընդունել:

Ծանր լուծի դեպքում յերեխան շատ հաճախ է դուրս դնում, որական 20 և ավելի անգամ: Կղանքը ջրիկ է լինում, դորշադույն, պղտոր ջրի նման: Յերեխան բոլորովին կորցնում է ուտելու ատրթակը, դրա փոխարեն մեծ ծարավ է դգում:

Հիվանդութունը շատ շուտ և սաստիկ հյուժում է յերեխային: Նա շուտ նիհարում է, շատ թուլանում, թառամում և հյուժվում է: Նիհարությունից նրա աչքերը փոս են ընկնում, պղտորվում են, աչքերի շուրջը յերեխան են դալիս մուգ չըջանակներ: Հայացքը դառնում է թախծալից, դեմքը փտիտանում է:

Յերեխան չըջում է գլուխն այս ու այն կողմը, կարծես ինչ վոր բան է փնտրում: Նրա վորը ներս ընկած է, հարթ: Ձեռներն ու վոտները սառը: Մաշկը չոր: Գլխի դադտունը ներս է ընկնում: Չայր դառնում է կերկերուն, անհնչյուն: Յերեխան ճշարու ուժ չի ունենում:

Ծանր լուծն այնպես բուռն է ընթանում, վոր

նմանվում է խոլերային, հեց այդ հիվանդությունն էլ առաջներում մանկական խոլերա յեր կոչվում:

Բայց բանն այն է, վոր խոլերայով հիվանդանում են բորբ հասակի մարդիկ, — թե յերեխաները և թե մեծահասակները և նա առաջանում է խոլերայի միկրոբներից: Իսկ մանկական խոլերայով հիվանդանում են միայն յերեխաները կյանքի առաջին տարում, մանավանդ ծծկերները:

Հաճախ այդ հիվանդությունից յերեխաները մեռնում են առաջին յերկու յերեք օրվա մեջ: Յեթե հիվանդությունը ձգձգվում է, յերեխան այնքան սաստիկ է թուլանում, վոր պահանջում է շատ ուշադիր և լավ խնամք և բժշկի ու քրոջ մշտական հսկողություն:

Յերեխայի համար չարագանց փտանգավոր է այդ դրության մեջ մի ուրիշ հիվանդությամբ ևս հիվանդանալը: Յե՛վ հենց հաճախ պատահում է, վոր այդ ժամանակ յերեխան են դալիս զանազան բարդություններ — թոքերի բորբոքում, յերիկամների բորբոքում, ականջների բորբոքում և ուրիշ հիվանդություններ:

Այդպիսի ծանր հիվանդություն տանելուց հետո յերեխաները դանդաղ են կազուրվում և պահանջում են շատ ուշադիր խնամք և կանոնավոր դրույշ կերակրում:

Պետք է նշել, վոր այդ հիվանդության դեպքում, դլխավոր դեղը, իսկ յերբեմն էլ յերեխային փրկելու միակ միջոցը, հանդիսանում է կնոջ կաթը: Կնոջ կաթի յուրաքանչյուր կաթիլ այդ դեպքում հսկայական նշանակություն ունի:



Ամուսնը, իսկ յերբեմն ել տարվա մյուս յեղա-  
նակներին, յերեխաները հիվանդանում են ևս յերկու  
շատ ծանր հիվանդություններով— արյունոտ կոլի-  
տով (հաստ աղիքի բորբոքում) և դիզենտերիայով  
(արյունալուծով) :

Այդ յերկու հիվանդությունները շատ նման են  
իրար, տարբերությունը միայն նրանումն է, վոր  
արյունոտ կոլիտը մի քիչ ավելի թեթեւ է ընթանում,  
քան արյունալուծը և առաջանում է զանազան աղիքա-  
յին միկրոբներից : Իսկ արյունալուծն առաջանում է  
հատուկ արյունալուծային միկրոբներով վարակվե-  
լուց :

Արյունալուծով և արյունոտ կոլիտով հիվանդա-  
նում են մոչ միայն յերեխաները, այլ և մեծերը : Թե  
սրանք և թե մյուսները կարող են վարակվել մեկը  
մյուսից :

Այս հիվանդություններն առհասարակ շատ վա-  
րակիչ են և տանջալից : Նրանց ժամանակ յերեխան  
աչնքան շատ դուրս չի դնում, ինչպես մանկական  
խոլերայի ժամանակ, դրա փոխարեն, հիվանդացած  
յերեխան անընդհատ «դուրս դնալ» է ուզում, շարու-  
նակ դոռ և տալիս : Կղանքը շատ քիչ է դուրս դալիս,  
սակայն նրանում յորձ, թարախ և արյուն է լինում :  
Դուրս դնալու ժամանակ յերեխան սաստիկ ցավ է  
զգում :

Խիստ ու հաճախակի դոռ տալուց հաճախ յերե-  
խայի հետույքից դուրս է սլքծնում, իսկ յերբեմն ել  
դուրս է ընկնում ուղիղ աղիքը (նախաղիքը) :

## ԻՆՉ ԱՆԵԼ ՅԵՐԵԽԱՅԻ ՄՈՏ ԼՈՒԾ ՅԵՐԵՎԱԼՈՒ ԴԵՊՈՒՏ

Մենք արդեն ասացինք, վոր յերբ յերեխան հի-  
վանդանում է լուծով, հիվանդությունը արագ է ըն-  
թանում : Շատ շուտ մն յերեվան գալիս փսխոցը, լու-  
ծը և յերկու-յերեք օրվա ըլթացքում, իսկ յերբեմն  
ել ավելի շատ, յերեխան արդեն ծանր հիվանդ է : Հե-  
տևապես շուտափուլթ ողնություն է հարկավոր : Հա-  
պաղել չի կարելի, յուրաքանչյուր ժամը թանդ և :

Ամենադիտավորը՝ պետք է հիշել, վոր կանոնա-  
վոր ողնություն է հարկավոր : Իսկ յեթե սկսեն բու-  
ժել «իրենցավարի», «տնավարի», կարելի չե յերե-  
խային անուղղելի վնաս հասցնել :

Այդ պատճառով, մեր առաջին խորհուրդն է, հենց  
վոր յերեխան հիվանդացավ լուծով, հարկավոր է նրս  
հետ անմիջապես գնալ կոնսուլտացիա կամ բուժարտն  
բժշկի մոտ, կամ բժիշկ կանչել տուն :

Հարկավոր է նկատի ունենալ, վոր հաճախ հի-  
վանդության բնույթն ու ձևվը բժիշկը կարող է ճա-  
նաչել կղանքի տեսքից : Այդ պատճառով բժշկի մոտ  
գնալիս պետք է տանել բարուրաչորը յերեխայի վեր-  
ջին կղանքի հետ :

Սակայն հաճախ պատահում է, վոր մայրը չի  
կարողանում հիվանդացած յերեխային շուտ ցույց տալ  
բժշկի : Այդ պատճառով յուրաքանչյուր մայր պետք  
է դիտենա, թե ինչպիսի ողնություն է հարկավոր  
ցույց տալ լուծով հիվանդացած յերեխային հիվան-  
դությունն սկսվելու հենց առաջին մոմենտին :

Հարկավոր է, ամենից առաջ, չչփոթվել, գլուխը  
չկորցնել և կատարել հետեվյալը :

Հենց վոր յերեխայի մոտ յերեվան յեկան փսիոցն ու լուծը, անհրաժեշտ և դադարեցնել նրան կերակրելը: Որվա կեսի ընթացքում, իսկ յեթե մինչև հեվանդուիթյունը յերեխան ամբողջաբար եր և առողջ, ապա և գրեթե ամբողջ ուրը, նրան չպետք է կերակրել: Անհրաժեշտ է յերեխային միայն խմելու տալ յեռացրած սառը ջուրը, կարելի յե տալ նաև մի քիչ շաքարով քաղցրացրած:

Կարելի յե հետևյալ կերպ վարվել: Ինքնայնուց կամ թեյամանից յեռացրած ջուրը լցնել սափորի կամ շշի մեջ և այդ ջուրը դնել սառուցի վրա կամ սառը ջրի մեջ: Յեռացրած սառը ջուրը հիվանդացած յերեխային պետք է տալ 1—2—3 թեյի գդալ յուրաքանչյուր կես ժամը մեկ:

Մեկ որվա այդպիսի օժիտից հետո կարելի յե շատ գլուշուիթյամբ սկսել յերեխային կերակրել: Ամենից լավ է յուրաքանչյուր 2 ժամը մեկ նրան տալ 2 թեյի գդալ քամած վանացի կաթ: Այդ կաթը նույնպես պետք է տալ սառը վիճակում և փոքր բաժիններով: Բացի կաթից, անհրաժեշտ է, կերակրելու ընդմիջումներին առաջվա նման սառը ջուր տալ:

Յեթև յերեխան կերակրվում է կովի կաթով և մայրը կաթ չունի, անհրաժեշտ է շտապ կարգով կանացի կաթ ձարել (ուրիշ կնոջից): Մենք արդեն ասել ենք, վոր կնոջ կաթը լավադույն գեղն է այդ հասակի ծանր հիվանդացած յերեխայի համար:

Վո՞րտեղից ձարել կնոջ կաթ:

Մի քանի կոնսուլտացիաներին կից կան կնոջ կաթի համաքակայաններ: Հետեվապես, կարելի յե փորձել կաթն ախտեղից ստանալ:

Հավաքակայան չլինելու դեպքում պետք է դտնել

մի ուրիշ մայր, վորն իր յերեխային կրծքով է կերակրում և խնդրել նրան, վոր մի քիչ կաթ քամի: Մահայն այդպիսի կաթը կարելի յե տալ միայն յեռացրած:

Հիվանդացած յերեխային կերակրելու համար առաջին որը հարկավոր կլինի ընդամենը կես բաժակ կաթ:

Յեթե այնուամենայնիվ կնոջ կաթ ձարել չի հաջողվում, յերեխային կարելի յե կովի կաթ տալ:

Կովի կաթը կես առ կես պետք է խառնել յեփոված ջրի հետ, ավելացնելով մի քիչ շաքար (մի բաժակ խառնուրդին մի թեյի գդալ շաքար) և յեռացնել:

Բացած կովի կաթը նույն ձևով են տալիս, ինչ վոր կնոջ կաթը՝ յուրաքանչյուր 2 ժամը մեկ 2 թեյի գդալ: Կերակրելու ընդմիջումներին նույնպես յեռացրած սառը ջուր են տալիս:

Ինչպես կաթը, այնպես և ջուրը յերեխային պետք է տալ փոքրիկ գդալով և փոքր բաժիններով: Կաթը ծծակով չտալ, վորովհետեմ ծծակը փսիոց է առաջացնում:

Չպետք է վախենալ յերեխային՝ լուծով հիվանդանալու առաջին ժամերին ուտելիքից դրկելուց: Այդ փոչ միայն փնաս չի հասցնի յերեխային, այլ ընդհակառակը, շատ ոգտակար է նրա համար:

Սոված մնալու ժամանակ յերեխայի ստամոքսը և աղիքները կհանգստանան, կհանդարտվեն: Փսիոցը կդադարի: Շատ հաճախ է պատահում, վոր թեթեմ լուծը այդ միջոցների հետեվանքով միանգամայն դադարում է:

Բացի դրանից, յերեխան պետք է լիակատար անդորրութիւնն ստանա: Հարկավոր է նրան պառկեցնել մահճակալում, չդրկել և առհասարակ շանհանդատացնել:

Յեթե յերեխայի վտաններն ու ձեռները ստոն են, պետք է տաքացնել նրանց: Դրա համար կարելի չէ ուղտվել սեռինն ջեռոցից վամ տաք ջուր լցրած շէջ:

Նախքան ջեռոցը դնելը, հարկավոր է անպայման փաթաթել բարուրաչորով, վորպեսզի յերեխայի մարմինը չայրվի: Ավելի լավ է ջեռոցը դնել աղայի վրայից: Յերեխայի փորը կարելի չէ կապել տաքացրած բրդի շալով:

Բարուրաչորը և կեղտոտված մանկական սպիտակեղները չպետք է թափթփել, հարկավոր է նրանց պահել ծածկված ամանի (դուլլի, կճուճի) մեջ, վորպէսզի հետո լավ յեփ տրվեն ու լվացվեն: Այդ անհրաժեշտ է նրա համար, վորպէսզի վարակն առողջ յերեխաներին չփոխանցվի:

## ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԼՈՒԾԻՑ

Մենք արդեն ասել ենք, վոր յերեխայի լուծով հիվանդանալու դիտավոր պատճառներից մեկը միկրոբներն են: Միկրոբներն ամեն տեղ չըջապատում են մեզ: Նրանք կարող են գտնվել ողի փոշու մեջ, ջրի մեջ, ուտելեղների մեջ, հագուստի, սպիտակեղների վրա և այլն:

Հետևապէս, դիտավոր ինդիքն է— իրեն և յերեխային պաշտպանել միկրոբներից: Դրա համար, նախ և առաջ անհրաժեշտ է ամեն ինչում մաքրու-

թիւն պահպանել. մաքուր պահել բնակարանը, ուտելիքը, մարմինը, հաղուստը, սպիտակեղները և այլն:

Ճիշտ է, շատ-շատ յերեխաներ չեն հիվանդանում, թեկուզ և միկրոբներն ընկել են նրանց որդանից մեջ: Այդ նրանից է, վոր որդանիցմն ինքը պաշտպանվում է վնասակարութիւնից:

Յերեխան վորքան ավելի առողջ է և ամրակազմ, այնքան նա հաղվաղեալ է հիվանդանում: Ընդհակառակը թուլացած, նվազ յերեխան ավելի շուտ է հիվանդանում դանադան հիվանդութիւններով:

## ԿԱՆՈՆԱՎՈՐ ԿԵՐԱԿՐԵՑԷՔ ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ

Վորպէսզի յերեխայի որդանիցմն ամրակազմ լինի, հարկավոր է նրան լավ ու կանոնավոր կերակրել: Լավագույն սնունդը ծծկեր յերեխայի համար մինչև 5—6 ամսական հասակը, մայրական կրծքով կերակրելն է: Այդ ժամանակ յերեխային բացի կրծքից վոչինչ չպետք է տալ և լրացուցիչ վոչնչով չկերակրել: Անհրաժեշտ է, վոր մայրերը բոլոր ուժերը, ջանքերը դորձադրեն, վորպէսզի պահպանեն իրենց կրծքի կաթը յերեխայի համար:

Կերակրելու ժամանակ պետք է կարգ պահպանել, վորպէսզի յերեխան չդերկերակրվի: Պետք է կերակրել որական 6—7 անգամ դիշերային 6—6½ ժամվա ընդմիջումով: Անկարգ կերակրելը վնաս է հասցնում յերեխային:

Կերակրելու մոտավոր ժամերը հետեվյալներն են՝ առավոտվա ժամի 6-ին, առավոտվա ժամի 9½-ին, ցերեկվա ժամի 1-ին, ցերեկվա ժամի 4½-ին, յերեկոյան ժամի 8-ին, յերեկոյան ժամի 11½-ին:

Կրժքով կանոնավոր կերակրվող յերեխաները 6—7 անգամ ավելի պակաս են հիվանդանում և մեռնում, քան արհեստական կերպով կերակրվող յերեխաները:

Յերեխային լրացուցիչ կեր պետք է տալ սկսած 5—6 ամսական հասակից: Այդ ժամկետից շուտ յերեխային լրացուցիչ կեր կարելի յե տալ բացառիկ դեպքերում, միայն նախապես խորհրդակցելով բժշկի հետ:

Վոչ վաքի խորհուրդների չլսեք, իսկ հարկավոր դեպքերում դիմեցեք բժշկի կամ քրոջ:

Յերեխային կրժքից պետք է կտրել մոտ մեկ տարեկան հասակում: Յեթե այդ ժամանակը զուգադիպում է ամառվա դալու հետ, ապա ավելի լավ է յերեխային կերակրել ավելորդ 2—3 ամիս, մինչև աշուն: Շատ կարեվոր է յերեխայի համար ամռանը պահել թեկուզ որական 1—2 կրժքի կերակրում: Մենք արդեն ասացինք, վոր կնոջ կաթով կերակրելն աւանձնապես անհրաժեշտ է յերեխայի լուծով հիվանդանալու ժամանակ:

Մեկ տարեկանից բարձր յերեխաներին կերակրելու ժամանակ նույնպես անհրաժեշտ է վորոչ կարդ ու կանոն պահպանել: Յերեխան պետք է վարժեցված լինի որվա վորոչ ժամանակ ուտելուն: Յերեխային պետք է թարմ ուտելիք տալ: Չի կարելի նրան տալ կոնսերվներ, յերչիկ, վոչ թարմ միս և այլն:

Յերեխաները ևս, ինչպես և մեծերը ամառ ժամանակ ծարավ են զգում: Չմոռանաք յերեխային խմացնել յեռացրած սառը ջուր սուանց չաքարի: Կերակրելու ընդմիջումներին պետք է մի քանի անգամ յերեխային խմելու ջուր տալ զզարով:

Յերեխայի որպանիքմի առողջութունն ու ամբողջողութունը պահպանելու համար անհրաժեշտ է կոխել այն:

Շատ մայրեր վախենում են յերեխայի մրսելուց, շատ վաթաթում են յերեխաներին, զրկում նրանց մաքուր սղից, վատ են ողափոխում սենյակը, ուշուշ են լողացնում յերեխային և ուրիշ շատ սխալներ են գործում յերեխայի խնամքի ասպարիզում և այդ բոլորը յերեխային մրսեցնելու վախից: Յերեխայի համարյա բոլոր հիվանդողութունները մայրերը մրսելուն են վերադրում:

Իհարկե, այդ բոլորը ճիշտ չէ: Փաթաթելով յերեխային, դաստիարակելով նրան վորպես Չերմոցային բույս, մենք հասնում ենք միայն այն բանին, վոր յերեխան քեքշանում է և ցուրդ ողի ամենափոքր փչելուց անգամ իրոք վոր վնասվում է:

Յերեխային պետք է տաք հաղցնել, յերբ ցուրտ է, բայց չփաթաթել, չծածկել նրա դեմքը, վորպեսղի նա կարողանա շնչել—թարմ և նույնիսկ սառն ողով: Ամեն որ յերեխային պետք է թարմ ողի դուրս բերել, պետք է լավ ողափոխել սենյակը, բանալ ողանցքները նույնիսկ յերեխայի ներկայությամբ:

Յերեխային ամեն որ պետք է լողացնել, մանավանդ ամռանը: Ամառ ժամանակ մեկ տարեկանից բարձր հասակ ունեցող յերեխայի վրա կարելի յե զոլ ջուր լցնել ցնցուղով:

Մենք առաջուց հիշատակեցինք, վոր լուծերի պատճառը լինում է նաև յերեխայի գերտաքացումը: Այդ պատճառով ամառ ժամանակ յերեխային պետք

ե պահել վոչ թե արևի տակ, այլ սովերում: Անհրա-  
թեշտ ե սմբողջ որերով յերեխային բացողչա պահել  
և սենյակը լալ սղափոխել:

Սմոանը կարելի չե յերեխային ողի և արևի վան-  
նաներ անել: Իմանալու համար, թե ինչպես այդ ա-  
նել, հարկավոր և անցնել կոնսուլտացիա և խորհրդ-  
դակցել բժշկի հետ:

Կտրված յերեխան չի մրսի, ավելի պակաս կհի-  
վանդանա զանազան հիվանդություններով, այդ թը-  
վում նաև լուծերով:

### ՊԱՀՊԱՆԵՑԵՔ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Մաքրություն պահպանելու մասին մենք արդեն  
մի քանի անգամ խոսել ենք: Կրկնություններ չենք  
անի, կտանք մի քանի գործնական խորհուրդներ:

Հատակն ավելցեք խոնավ խողանակով կամ շորով:  
Պոնավ շորով սրբեցեք նաև կահկարասու և մյուս  
առարկանները փոշին: Այդ բանն արեք հատկապես  
խոնավ շորով, այլապես փոշին չի վերցվում, այլ մի  
տեղից մյուս տեղն է քշվում: Ամենից շատ միկրո-  
ներ փոչու մեջ են լինում:

Ավելի հաճախ լվացեք ձեռներդ: Կեղտոտ ձեռնե-  
րով վարակը հիվանդից առողջին է փոխանցվում:  
Հատկապես ուշադիր կերպով պետք է լվանալ ձեռ-  
ներն ամեն անգամ կղանքով կեղտոտված բարուրա-  
չորերին ձեռք տալուց հետո, զուգարան գնալուց հե-  
տո, յերեխային կերակրելուց առաջ:

Ծծակը, գդալը, խաղալիքները և ուրիշ առարկա-  
ներ, վորպիսիք յերեխան բերանն է տանում, ավելի

հաճախ լվացեք: Կեղծ ծծակը հատակին ընկնելուց  
հետո ամեն անգամ լվացեք յեռացրած շրով:

Վորոչ մայրեր մի վատ սովորություն ունեն-  
ծ ծակն սկզբում իրենց բերանն են դնում, լիզոտում  
են և հետո տալիս յերեխային: Պետք է գիտենալ, վոր  
մեր բերանի մեջ շատ միկրոբներ են դտնվում և լիզո-  
տելով ծծակը, մայրը կեղտոտում է յերեխայի բերա-  
նը: Այդ շատ վնասակար սովորություն է և չպետք  
է անել այդ բանը:

Այն ամանը, վորի մեջ պահվում է կաթը կամ  
յերեխայի մի ուրիշ ուտելիք պետք է ուշադիր կեր-  
պով լվացված ու ծածկված լինի:

Յերեխան պետք է ունենա իր առանձին իրերը՝  
սպիտակեղենը, բարուրաչորը, սրբիչը և այլն: Չի  
կարելի յերեխային մաքրել ընդհանուր սրբիչով,  
ծածկել մեծերի վերմակով, իրեն հետ պառկեցնել  
քնելու:

Չհամբուրեք յերեխայի շրթունքները և թույլ  
չտաք այդ բանն անել ուրիշներին:

Չթքեք ու չխնչեք հատակին: Թուրք չորանում  
է և հետո փոչու հետ տարածվում սենյակում:

### ՎՈՉՆՉԱՑՐԵՔ ՃԱՆՃԵՐԻՆ

Ճանճերը չափազանց շատ վնաս են տալիս: Նը-  
րանց դեմ պայքարը պետք է շարունակ տանել:

Ճանճերը գուղարաններից, աղբի արկղներից,  
դամաղբի կույտերից, կեղտոտ սպիտակեղենից (բա-  
րուրաչորերից), հիվանդների սպիտակեղենից միկ-  
րոբներ են փոխանցում ուտելիքի և ամանեղենի վրա:  
Այդ պատճառով անհրաժեշտ է մթերքներն ու ա-

մանները ծածկել ճանճերից և վաշխացնել ճանճերին բոլոր միջոցներով՝ ճանճորսերով, կաշուն թղթով, ֆորմալինոս ջրով և այլն:

Ճանճերի դեմ պայքարի լավագույն միջոցը— թույլ շտալ նրանց բազմանալ: Դրա համար հարկավոր և ժամանակին հավաքել ու ծածկել դոմաղբը, հավաքել աղբը, մարդկային կեղտոտություններն այս ու այն կողմը չթափթփել, այլ սգտվել դուզարաններից, կեղտաձրի հորերի, աղբի արկղների պարունակութան վրա քլորակրի 10 տոկոսանոց լուծույթ լըցնել, իսկ դուզարանների պարունակութան վրա քլորակիր ցանել:

Ճանճերին սենյակ չթողնելու համար հանճարարվում և լուսամուտները ծածկել մարբայով կամ մետաղե ցանցերով, վորոնք ամրացվում են շրջանակներին:

Ճանճերին չհրապուրելու համար սեղանի վրա և ուրիշ բաց տեղերում չթողնեք հացի փշրանքներ և ուտելիքի մնացորդներ:

## ՄԵԾԱՑՐԵՔ ԱՌՈՂՁ ՅԵՐԵՒԱՆԵՐ

Առողջ յերեխա մեծացնելու համար պետք է կարողանալ նրան կանոնավոր կերակրել, կանոնավոր խնամել, պաշտպանել նրան հիվանդություններից, այլ թվում նաև լուծերից:

Մեր առողջապահական մարմինները, մայրության ու մանկության պահպանության մարմինները յեռանդուն կերպով պայքարում են մանկական հիվանդացումներն իջեցնելու համար: Մսուրները, կոնսուլ-

տացիաները, մանկական հրապարակները նպաստում են այդ մեծ աշխատանքի հաջողությանը:

Վաչ մի տեղ աշխարհում յերեխաների առողջության պահպանության, գործն այնպես լավ չի զբաված, ինչպես խորհրդային միության մեջ:

Յուրաքանչյուր մոր պարտքն է լրիվ ուսուցումը և այն, ինչ տալիս է խորհրդային իշխանությունն աշխատավորներին, ոգնել իր սոցլալիստական պետությանը մեծացնելու առողջ, ամրակազմ սերունդ, սոցլալիզմ կառուցողների փոխարինողներ:

1. Լուծերն սպանում են փոքրահասակ յերե- խաներին . . . . .	3
2. Յերեխաներն ինչո՞ւ յեն հիվանդանում լուծերով . . . . .	5
3. Ինչպիսի լուծերով են հիվանդանում յերե- խաները և ինչպես են նրանք ընթանում .	11
4. Ինչ անել յերեխայի մոտ լուծ յերևալու դեպքում . . . . .	15
5. Ինչպես պաշտպանել յերեխաներին լուծից	18
6. Կանոնավոր մերակրեցեք յերեխաներին .	19
7. Կոփեցեք մանկական սղանիղմը . . . . .	21
8. Պահպանեցեք հիգիենայի կանոնները . .	22
9. Վոշնչացրեք ճանճերին . . . . .	23
10. Մեծացրեք առողջ յերեխաներ . . . . .	24



Պատ. խմբագիր՝ Մ. ԲԵԿՉՅԱՆ  
Թարգմանիչ՝ ԱՎ. ՇԱԹԻՐՅԱՆ  
Տեխ. խմբ. և սրբագրիչ՝ Վ. ԴԱՎԹՅԱՆ

---

Գլավիխի լիազոր՝ Ե 1157 Պատվեր № 655, Տիրաժ 8000  
Հանձնված և արտադրության 23/XI 1939 թ.  
Ստորագրված և տպագրելու 28/X 1939 թ.

---

Հայկական ԽՍՀ ԺԿՈ-ին կից «Որհնորդային Հայաստան»  
հրատարակչության տպարան, Յերևան

ՀՀ Ազգային գրադարան



NL0273609



619

5243

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

Դ-ր Ա. Ե. ԳՕՓՄԵԿԼԵՐ

Предохраним маленьких детей  
от поносов

---

Сан. Просвет. отдел НКЗдрава Арм. ССР  
Երևան—1939 Կ.